600.0132.15.04.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի 2020 թվականի №132Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի փետրվարի 26-ի №105-20 և №106-20 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Մոսկովյան 1 և 1/1 հասցեներում գտնվող անշարժ գույքը Վարդան Բոջուկյանին, 1/2 և 1/3 հասցեներում գտնվող անշարժ գույքը համապատասխանաբար՝ Վազգեն Բաբաջանյանին և Նվեր Հովսեփյանին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Խրիմյան Հայրիկ 38/2 հասցեում գտնվող հողամասից առանձնացվող 1787քմ մակերեսով հողամասը՝ Գևորգ Ֆարզադյանին նվիրատվությամբ օտարման գործարքների (այսուհետ՝ Գործարքներ) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2020 թվականի մարտի 12-ի №ՍԱ/34.1-Մ2-2/916-20 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքների վերաբերյալ կառավարության դիրքորոշումը ստանալու համար,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 3-ի №02/12.8/13221-2020 գրությամբ Հանձնաժողով ներկայացված շահագրգիռ մարմինների՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման

և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի գրությունների համաձայն՝ վերջիններս Գործարքների վերաբերյալ առարկություններ չունեն,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքներին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանը և պետական շահերին, իսկ անհրաժեշտ փոխառության վերաբերյալ դրույթը Գործարքների նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի Մոսկովյան 1 և 1/1 հասցեներում գտնվող անշարժ գույքը Վարդան Բոջուկյանին,

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի Մոսկովյան 1/2 և 1/3 հասցեներում գտնվող անշարժ գույքը համապատասխանաբար՝ Վազգեն Բաբաջանյանին և Նվեր Հովսեփյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Խրիմյան Հայրիկ 38/2 հասցեում գտնվող հողամասից առանձնացվող՝ 1787 քմ մակերեսով հողամասը Գևորգ Ֆարզադյանին նվիրատվությամբ օտարելու գործարքներին:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված Գործարքների կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված Գործարքները կնքելուց հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրանց վերաբերող փաստաթղթերի պատճենները.

2) Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱԳՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
15 ապրիլի 2020թ.